ԱՆԱՀԻՏ ԲԵՔԱՐՅԱՆ. Բայրոնը և հայ իրականությունը (հայերեն և անգլերեն), *Երևան, ԵՊՀ հրատ., 2013, 404 էջ + 4 էջ ներդիր:*

Երևանի պետական համալսարանի հրատարակչությունը վերջերս լույս ընծայեց «Գալուստ Կիլպէնկեան հիմնարկութեան» հայկական մատենաշարի հերթական հատորը՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու Անահիտ Բեքարյանի «Բայրոնը և հայ իրականությունը (հայերեն և անգլերեն)» մենագրությունը, որտեղ ամփոփված են հեղինակի բազմամյա ուսումնասիրությունների արդյունքները:



Ա. Բեքարյանի հետազոտությունը նվիրված է Բայրոնի և հայ իրականության առնչություններին, որոնց վերաբերյալ մինչև այժմ գոյություն չուներ համապարփակ, ամբողջական և գիտական լուրջ հետազոտություն: Հեղինակը կատարել է տեսական, ինչպես նաև գործնական զգալի արժեք ներկայացնող աշխատանք: Ա. Բեքարյանի մենագրությունը հայ-անգլիական գրական կապերի ոլորտում մի նոր էջ է, որը տպավորիչ է իր հիմնավորվածությամբ, խորությամբ ու ծավալով: Գիրքը Մխիթարյանների և Բայրոնի առնչություններն ամբողջացնող լուրջ ուսումնասիրություն է, որտեղ առաջին անգամ հստակորեն ու հանգամանալից ներկայացված է հայ բայրոնագիտության անցած արգասավոր ուղին: Ա. Բեքարյանը կատարել է համակողմանի ուսումնասիրություն՝ հենվելով հիմնականում սկզբնաղբյուրների վրա:

Ներկայացվող աշխատանքում հեղինակն անդրադարձել է Բայրոնի և Վենետիկի Մխիթարյանների առնչություններին, Մխիթարյանների կողմից Բայրոնի երկերի հրատարակություններին, ինչպես նաև օտարազգի հեղինակների այն աշխատություններին, որոնք վերաբերում են Բայրոնի ու Մխիթարյանների առնչություններին: Ա. Բեքարյանը ոչ միայն ընդհանրացնում է արդեն կատարված հետազոտությունների արդյունքները, այլև ճշգրտում է դրանք, լրացնում հայ բայրոնագիտության մեջ տեղ գտած բացթողումները՝ օգտագործելով բանաստեղծի նամականին, նաև տարբեր լեզուներով առկա բազմաթիվ հետազոտություններ ու փաստաթղթեր: Աշխատության կարևոր նվաճումներից է այն, որ առաջին անգամ մանրազնին քննվել են օտարազգի բազմաթիվ հեղինակների (Յուրի և Ալեքսեյ Վեսելովսկիներ, Իրվինգ Ուոլլես, Չարլզ Դաուսեթ, Լորենս Դակին, Ժակլին Վուանյե-Մարշալ, Դոնաթելա Ռոսսի, Քերոլայն Ֆրանկլին) գիտական ու գեղարվեստական գործերում զետեղված՝ Բայրոնի հայագիտական ուսումնասիրություններին, նրա ու Մխիթարյանների առնչություններին վերաբերող նյութերը:

Ա. Բեքարյանի աշխատության կարևոր ձեռքբերումներից է հայագիտության պատմության մի կարևոր դրվագի վերհանումը՝ Բայրոնի «հայկական» նամակների լույսի ներքո XVIII–XIX դարերում Եվրոպայում հայագիտության ձևավորման ու զարգացման պատմության համակողմանի ուսումնասիրությունը: Հեղինակն ընդլայնում է իր հետազոտության սահմանները, ներկայացնում է Եվրոպայում հայագիտության զարգացման ամբողջական համատեքստը և այդ համատեքստում համոզիչ կերպով գնահատում Բայրոնի ու նրա հայագիտական ուսումնասիրությունների դերը:

Աշխատության մեջ լուսաբանվում են նաև Բայրոնի ու նրա ստեղծագործությունների մասին հայկական մամուլում տեղ գտած հոդվածները, ներբողները և ուսումնասիրությունները, նաև քննվում են հայ գրականության մեջ բայրոնիզմի արտացոլման առանձին դրվագներ: Մանրակրկիտ և խոր վերլուծությունների շնորհիվ հեղինակն իր հետազոտության ընթացքում որոնում ու գտնում է հայ քնարերգության մեջ արտացոլված «բայրոնիզմի» յուրահատուկ հատկանիշներ. բացահայտում է տիպաբանական նմանություններ և ընդհանրություններ, զուգահեռներ է անցկացնում Ս. Շահազիզի, Հ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի և ուրիշների երկերի ու հերոսների և Բայրոնի երկերի ու հերոսների միջև:

Ընդհանուր առմամբ՝ Ա. Բեքարյանի «Բայրոնը և հայ իրականությունը» մենագրությունը շարադրված է գիտական պատշաճ մակարդակով: Հատկապես ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ հեղինակն օգտվել է միայն սկզբնաղբյուրներից: Դա նրան հնարավորություն է տվել ոչ միայն բացահայտելու և արձանագրելու մենագրության մեջ արծարծվող հարցերի վերաբերյալ նոր փաստեր ու տեղեկություններ, այլև ուղղելու հայ մամուլում Բայրոնի մասին տեղ գտած և հաճախ կրկնվող անճշտությունները, սխալներն ու վրիպումները: Կատարված ծավալուն աշխատանքի վկայությունն է նաև օգտագործված գրականության ցանկը, որն ընդգրկում է ավելի քան երկու հարյուր անվանում: Բացի այդ, կարևոր առավելություն է այն, որ մենագրության տրամաբանությունն արդեն իսկ հուշում է հետագա ուսումնասիրությունների ոլորտները: Այսպես, օրինակ, կարելի է ավելի խոր և բազմակողմանիորեն քննել հայ գրականության մեջ բայրոնիզմի արտացոլման դրվագները, զուգահեռներ անցկացնել Բայրոնի և բազմաթիվ հայ բանաստեղծների ստեղծագործությունների միջև:

Ամփոփենք. հայ ու անգլիախոս ընթերցողի սեղանին է դրվել մի հետաքրքիր և ուշագրավ հայագիտական ուսումնասիրություն, որի կարիքը վաղուց էր զգացվում:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ